

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N՞1

«01» փետրվարի 2021թ. թիվ ՇՄՆ-ԴՇ-21/02 պայմանագրի

ք.Երևան

«17» « հունիսի » 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գույանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի Ժ/պ Լ.Ազիզյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2021 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 943-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2021 թվականի փետրվարի 1-ին կնքված «ՇՄՆ-ԴՇ-21/02» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

- 1.1. Կողմերը որոշեցին 2021 թվականի փետրվարի 1-ին կնքված «ՇՄՆ-ԴՇ-21/02» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝
1.1.1. Պայմանագրի 1.1 կետում «1 640 108 100 (մեկ միլիարդ վեց հարյուր քառասուն միլիոն հարյուր ութ հազար հարյուր)» բառերը փոխարինել «1 633 178 400 (մեկ միլիարդ վեց հարյուր երեսուններեք միլիոն հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր)» բառերով,
1.1.2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N՞1-ի «Միջոցառումներ» աղյուսակում՝
ա) 1-ին կետի «պահանջվող գումարը (դրամ)» սյունյակում «1 313 140 500» թիվը փոխարինել «1 306 210 800» թվով,
բ) «Ընդամենը» տողում «1 640 108 100» թիվը փոխարինել «1 633 178 400» թվով:
1.1.3. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N՞2-ի «ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր» աղյուսակում «Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)» տողի՝
ա) «Առաջին կիսամյակ» սյունյակի «688 845.40» թիվը փոխարինել «685 934.90» թվով,
բ) «Ինն ամիս» սյունյակի «1 098 872.40» թիվը փոխարինել «1 094 229.50» թվով,
գ) «Տարի» սյունյակի «1 640 108.10» թիվը փոխարինել «1 633 178.40» թվով:

2. Այլ պայմաններ

- 2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների որջ ծավալով կատարումը:
2.2. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011035178
ՀՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ.Գույան

(ստորագրություն)
Կ.Տ.
[Signature and official seal of G. Gouyan]

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հիդրոոդերևութաբանության և
մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Չարենցի 46
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018003815
ՀՎՀՀ 02825793

«Հիդրոոդերևութաբանության և
մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի Ժ/պ
Լ.Ազիզյան

(ստորագրություն)
Կ.Տ.
[Signature and official seal of L. Azizyan]

[Handwritten signature and stamp at the bottom left]